



ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՁԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորմամբ*

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱԴԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական
Ա 597 հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ..... 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչապրյան

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ..... 9

Սվեդրյանա Հարությունյան

ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրյան

ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան

ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ..... 42

Էլենորա Զաքարյան, Մարինե Միքայելյան

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան

ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ61

Մանե Տոնոյան

ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան

ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրյան

ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ..... 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվեդրյանա Հարությունյան

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ113

Լիլիթ Ավերիսյան, Սոնա Մանուսյան

ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ
ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՈՒՄ 128

Քնարիկ Առաքելյան

ԱՆՁԻ ՁՈՎԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ..... 145

Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ՇՐՋԱՆՈՒՄ..... 153

Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԸՄԲՈՆՈՒՄԸ..... 179

Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՅՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈՋՄՈՒՆՔՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ..... 193

Ասպրիկ Սերոբյան

ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՌԻՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ..... 210

Անուշ Մկրտչյան

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ԱՍՊԵԿՏՆԵՐԸ..... 227

Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան

ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան

ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257

Նարինե Աղամյան, Իրինա Խանամիրյան

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ
ԱՐԺԵՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 263

Կարինե Գրիգորյան

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

*Արմինե Հայրապետյան
Լիլիթ Գարգրյան*

Ներածություն

Ներկայումս ուրբանիզացիայի բարձր աստիճանը և կյանքի արագ տեմպը, մրցակցության բարձր մակարդակը երբեմն հանդես են գալիս որպես խոչընդոտներ մարդկանց միջև հուզականորեն ջերմ և մտերիմ հարաբերությունների ստեղծման համար: Տարված լինելով մասնագիտության ձեռքբերմամբ և մրցակցային շուկայում համապատասխան աշխատանք ունենալու ցանկությամբ՝ երիտասարդները հաճախ անտեսում են ջերմ հարաբերությունների կարևորությունը: Ժամանակակից հաղորդակցման տեխնոլոգիաների զարգացումը ևս նպաստում է, որ երիտասարդությունը նախընտրի վիրտուալ շփումն իրականին, որը չի ապահովում անմիջական շփման հուզականությունը և մտերմությունը: Այնինչ, երիտասարդության տարիքում զարգացման հիմնական խնդիրներից մեկն է համարվում մտերիմ հարաբերությունների հաստատումը, ինչը ենթադրում է այլ մարդու կամ մարդկանց հետ սերտ հուզական կապի առկայություն: Միջանձնային հարաբերություններում մտերիմ կապվածության առկայությունը կամ բացակայությունը կարող է նշանակալի ազդեցություն ունենալ երիտասարդների՝ կյանքով բավարարվածության, հուզական բարեկեցության, նրանց ներդաշնակ զարգացման վրա:

Նշված հանգամանքներում միջանձնային հարաբերություններում հուզականության նվազման և երիտասարդների հոգեբանական բարեկեցության վրա դրա ազդեցության տեսանկյունից արդիական է ուսումնասիրել հոգեբանական բարեկեցության և կապվածության տեսակի փոխապայմանավորվածության առանձնահատկությունները:

Կապվածություն հասկացությունը, ժամանակակից մոտեցումներ

Կապվածություն հասկացությունն առաջին անգամ կիրառվել է Ջոն Բուլբիի կողմից: Կապվածությունն այն հուզական կապերն են, որոնք ձևավորվում են մանկիկի և նրա ծնողների կամ ծնողական ֆունկցիա

իրականացնող մարդկանց միջև [3]: Ջ. Բուլբրիի տեսության մեջ երեխայի կապվածությունը մոր հետ դիտարկվում է և՛ որպես երեխայի ակտիվ վարք, և՛ որպես երեխայի և մոր միջև հուզական կապ [1]:

Ջ. Բուլբրիի կապվածության տեսությունը հիմք հանդիսացավ մի շարք տեսությունների առաջացման և հետազոտությունների իրականացման համար: Հոգեբանության մեջ հայտնի են Ջ. Բուլբրիի հետևորդ Մերի Էյնսուորթի հետազոտությունը՝ «Անծանոթ իրավիճակը» (Strange situation) և, դրա արդյունքում ձևավորված, կապվածության տեսակների դասակարգումը: Մ. Էյնսուորթը, ըստ «անծանոթ իրավիճակում» երեխայի դրսևորած վարքի, դուրս բերեց կապվածության հետևյալ տեսակները.

- Ապահով կապվածություն
- Անվստահ, խուսափող կապվածություն
- Անվստահ, ամբիվալենտ կապվածություն [2, էջ 84-86]:

1980-ական թթ. կեսից սկսած՝ հետազոտողները սկսեցին լրջորեն մտածել, որ կապվածության պրոցեսները կարող են դրսևորվել նաև մեծահասակների շրջանում: Ս. Հազանը և Ֆ. Շավերն (C. Hazan, Ph. Shaver, 1987) առաջինն էին, որ Ջ. Բուլբրիի գաղափարները դիտարկեցին ռոմանտիկ հարաբերությունների համատեքստում: Ըստ այս հեղինակների՝ ռոմանտիկ զուգընկերների միջև առաջացող հուզական կապը մասնակիորեն նույն դրդապատճառային համակարգի՝ կապվածության վարքային համակարգի ֆունկցիան է, որը հուզական կապ էր ստեղծում երեխայի և խնամատարի միջև: Ս. Հազանը և Ֆ. Շավերը նկատեցին, որ երեխա-խնամատար հարաբերությունները և մեծահասակների ռոմանտիկ հարաբերություններն ունեն մի շարք ընդհանրություններ [մեջբերվում է ըստ 9]:

Կարևոր է հիշել, որ Ջ. Բուլբրին ի սկզբանե ենթադրում էր, որ կապվածության տեսակները ձևավորվում են երեխայի հանդեպ խնամքի ձևի հետևանքով և ներառում են սեփական անձի և ուրիշի վերաբերյալ ներքին օպերատիվ մոդելներ: Այդ պատճառով Բարդուղիմեոսի և Հորովիցի (Bartholomew & Horovitz, 1991), ինչպես նաև Գրիֆինի և Բարդուղիմեոսի (Griffin & Bartholomew, 1994) հետազոտությունների համար հիմք է հանդիսացել այն միտքը, որ կապվածության տեսակը կարելի է դուրս բերել երկու առանցքների համադրման միջոցով: Այդ առանցքներն են սեփական ես-ի ներքին մոդելը և ուրիշի ներքին մոդելը, յուրաքանչյուր առանցքն ունի երկու բևեռ՝ դրական և բացասական: Երբ երկու առանցքներն էլ դրական են, առկա է կապվածության ապահով տեսակը, երբ երկու առանցքներն էլ բացասական են՝ խուսափող տեսակն է: Եթե դրական է ուրիշի ներքին

մողելի առանցքը, սակայն բացասական է ես-ինը, ապա ստացվում է կլանված կապվածություն, այս դեպքում կա կախվածություն զուգընկերոջից: Ըստ այս մողելի՝ ստացվում է, որ առկա է նաև կապվածության չորրորդ՝ մերժող տեսակը, որի դեպքում մարդը պահպանում է սեփական դրական կերպարը, սակայն խուսափում է մտերմությունից [մեջբերվում է ըստ 4, էջ 185-186]:

Մեծահասակների կապվածության հետազոտությամբ են զբաղվել նաև Քելի Բրենանը և նրա գործընկերները (K. Brennan et al, 1998): Նրանք առաջարկում են մեծահասակների կապվածության պատերնների համար երկու չափումներ դիտարկել: Առաջին կարևոր փոփոխականն անվանվել է կապվածությամբ պայմանավորված տազնապ: Մարդիկ, ովքեր ունեն կապվածության բարձր տազնապ, հակված են անհանգստանալու, թե արդյոք իրենց զուգընկերը հասանելի է, արձագանքող, ուշադիր և այլն: Կապվածության ցածր տազնապով մարդիկ ավելի ապահով են իրենց զգում և վստահ են զուգընկերոջ կողմից ստացված արձագանքներում: Մյուս կարևոր փոփոխականը կոչվում է կապվածությամբ պայմանավորված խուսափում: Կապվածությամբ պայմանավորված բարձր խուսափում ունեցող մարդիկ նախընտրում են չվստահել այլ մարդկանց և բաց չլինել նրանց առջև: Կապվածությամբ պայմանավորված խուսափման ցածր մակարդակ ունեցող մարդիկ չեն խուսափում ինտիմությունից և հարաբերություններում ապահով են զգում՝ վստահելով դիմացինին: Ստացվում է, որ ապահով կապվածություն ունեցող մեծահասակը պետք է ունենա թե՛ կապվածությամբ պայմանավորված տազնապի, թե՛ խուսափման ցածր մակարդակ [մեջբերվում է ըստ 9]:

Ռ. Ֆրայլին և նրա գործընկերները, հիմք ընդունելով Ք. Բրենանի մոտեցումը, կապվածության տեսակի դուրսբերման համար ևս դիտարկում են կապվածությամբ պայմանավորված տազնապի և խուսափման համադրությունը: Ի տարբերություն Ք. Բրենանի մշակած մեթոդիկայի, որը չափում է տազնապի և խուսափման մակարդակները միայն ռոմանտիկ հարաբերությունների շրջանակներում և, հետևաբար, դուրս է բերում միայն ռոմանտիկ կապվածության տեսակը, Ռ. Ֆրայլին և իր գործընկերները մշակել է մեթոդիկա, որը չափում է կապվածության տեսակը ոչ միայն ռոմանտիկ զուգընկերոջ, այլև մոր, հոր և մտերիմ ընկերոջ հետ հարաբերություններում, ինչպես նաև այն թույլ է տալիս դուրս բերել առհասարակ տվյալ մարդուն բնորոշ կապվածության տեսակը [10]:

Ռ. Ֆրայլիի և գործընկերների կողմից իրականացվել են մի շարք հետազոտություններ՝ ուղղված կապվածության տարբեր

առանձնահատկությունների բացահայտմանը: Կ. Բրամբաիի և Ռ. Ֆրայլիի կողմից իրականացվել է հետազոտություն՝ պարզելու համար, թե արդյոք մի կապվածության պատերնները տեղափոխվում են այլ կապվածության մեջ: Ընդհանուր առմամբ՝ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ կապվածության գործող մոդելները տեղափոխվում են հաջորդ հարաբերություններ [7]: Ռ. Ֆրայլիի և իր իր այլ գործընկերների հետ իրականացված մեկ այլ հետազոտություն ցույց է տվել, որ մեծահասակների կապվածության մեջ առկա են կայունության պատերններ, որոնք առավել համապատասխանում են կապվածության մոդելի նախատիպին, ինչը ենթադրում է, որ գոյություն ունի կայունության գործոն՝ ընկած կապվածության ժամանակավոր տարբերակների հիմքում [11]:

Մեծ նշանակություն է ստացել կապվածության տեսությունը նաև հոգեբուժության և կլինիկական հոգեբանության մեջ: Կապվածության խնդիրներին ուշադրություն են դարձնում ինչպես ռուսական, այնպես էլ արևմտյան կլինիկական հոգեբանները և հոգեբույժները, որոնք ուսումնասիրել են ոչ միայն վաղ տարիքի, այլև մեծահասակների կապվածությունները:

Հետազոտությունները ցույց են տվել, որ կապվածության ոչ հուսալի տեսակով երեխաներն առավել հաճախ են հայտնվում մանկական հոգեբույժի սենյակում: Առավել մեծ ազդեցություն է ունենում ոչ հուսալի կապվածությունը հատկապես հոգեմարմնական հիվանդությունների առաջացման մեջ [5]:

Պ. Մերեդիթի, Թ. Օունսվորթի և Զ. Սթրոնգի իրականացրած հետազոտությունները ցույց են տվել, որ ոչ հուսալի կապվածության դեպքում կա քրոնիկ ցավի նախատրամադրվածություն, ինչպես նաև ցավի հանդեպ դիմացկունության անկում [12]:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ Զոն Բոուլբիի տեսությունը շարունակում է ակտուալ լինել մինչև այսօր՝ գտնելով իր զարգացումը տարբեր հետազոտությունների մեջ: Տարբեր հետազոտությունների շնորհիվ մենք տեսնում ենք, որ կապվածությունն անձի, նրա ձևավորման և զարգացման, հոգեկան առողջության կարևորագույն գործոններից է: Այն իր ազդեցությունն է ունենում անձի վրա՝ նորածնության շրջանից սկսած, և շարունակում է ազդեցություն ունենալ նաև մեծ տարիքում՝ անձի տարբեր ոլորտների վրա: Այդ պատճառով մենք իրականացրինք հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել երիտասարդների հոգեբանական բարեկեցության կապը կապվածության տեսակի հետ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության վարկած է հանդիսացել հետևյալ ենթադրությունը. կապվածության ապահով տեսակի դեպքում հոգեբանական բարեկեցությունը կլինի ավելի բարձր, քան կապվածության մյուս տեսակների դեպքում: Հետազոտության ընտրանքը ձևավորվել է ռանդոմիզացիայի սկզբունքով, այն բաղկացած է 20-25 տարեկան 79 հետազոտվողից: Հարկ է նշել, որ կիրառելով Սթյուդենտի *t* չափանիշը և *խի-քառակուսի* մեթոդները, հայտնաբերել ենք, որ ուսումնասիրվող բոլոր փոփոխականներում չկան սեռով պայմանավորված նշանակալի տարբերություններ, այդ պատճառով արդյունքների ներկայացման մեջ մենք չենք անդրադառնա միջսեռային վերլուծությանը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության անցկացման համար օգտագործվել է հարցարանային *մեթոդը*, մասնավորապես հետևյալ *մեթոդիկաները*.

- Ռ. Ֆրայլիի մշակած «Հարաբերությունների կառուցվածքներ հարցարան» (Relationship Structures (ECR-RS) Questionnaire) մեթոդիկա [8]: Այս մեթոդիկան մեծահասակների կապվածության տեսակ դուրս բերող ժամանակակից ամենարդյունավետ մեթոդիկաներից մեկն է: Այն մշակվել է Ք. Բրենանի, Ք. Քլարկի և Ֆ. Շավերի «Կապվածության տիպ և հարաբերությունների կառուցվածք» մեթոդիկայի հիման վրա, բայց, ի տարբերություն վերջինի, չափում է ոչ միայն ռոմանտիկ հարաբերություններում կապվածության տեսակը, այլ նաև գլոբալ կապվածության և ամենակարևոր մարդկանց հետ հարաբերություններում կապվածության տեսակը: «Հարաբերությունների կառուցվածքներ հարցարանը» կազմված է միևնույն ինը պնդումներից, որոնք գնահատվում են ըստ չորս տարբեր անձանց հետ հարաբերությունների՝ մայր, հայր, ռոմանտիկ զուգընկեր և լավագույն ընկեր: Կապվածության տեսակը դուրս է բերվում յուրաքանչյուր հարաբերության համար առանձին, իսկ գլոբալ կապվածության տիպ դուրս բերելու համար իրականացվում է խուսափման բոլոր ցուցանիշների և տագնապի բոլոր ցուցանիշների միջինացում: Համադրելով այս երկու ցուցանիշները՝ ստանում ենք գլոբալ կապվածության տեսակը [8]:
- Երիտասարդների հոգեբանական բարեկեցության մակարդակի դուրսբերման համար օգտագործվել է Քերոլ Ռիֆի «Հոգեբանական բարեկեցության սանդղակ» ռուսերեն ադապտացված հարցարանը, որը չափում է անձի ընդհանուր հոգեբանական բարեկեցության

մակարդակը, ինչպես նաև առանձին սանդղակներով չափում է հոգեբանական բարեկեցության բաղադրիչների մակարդակները: Օգտագործելով այս հարցարանը՝ կարող ենք պատկերացում կազմել հոգեբանական բարեկեցության հետևյալ բաղադրիչների մասին.

- «Դրական հարաբերություններ այլ մարդկանց հետ»
- «Ավտոնոմիա»
- «Միջավայրի կառավարում»
- «Անձնային աճ»
- «Կյանքում նպատակի առկայություն»
- «Ինքնընդունում» [6]:

Հետազոտության արդյունքները

Կապվածության տեսակի և հոգեբանական բարեկեցության միջև փոխկապվածությունը դուրս բերելու համար կիրառել ենք վիճակագրական վերլուծության ANOVA մեթոդը:

Մոր հետ հարաբերություններում կապվածության տեսակի և հոգեբանական բարեկեցության փոխկապվածությունը ANOVA վերլուծությամբ դուրս բերելու համար նախ կիրառել ենք հոմոգենության թեստը՝ ըստ Լևինի չափանիշի, որի արդյունքների հիման վրա հասկացել ենք, որ ANOVA վերլուծությունը կիրառելի է ավտոնոմիա, միջավայրի կառավարում, անձնային աճ և հոգեբանական բարեկեցություն սանդղակների համար, քանի որ այս սանդղակները հոմոգեն էին:

Դրական հարաբերություններ, կյանքի նպատակ և ինքնընդունում սանդղակների համար կիրառվել է *Քրուսկալ-Ուոլիս* թեստը: ANOVA վերլուծության և *Քրուսկալ-Ուոլիս* թեստի տվյալները ցույց են տալիս, որ մոր հետ հարաբերություններում կապվածության տեսակով պայմանավորված վիճակագրականորեն նշանակալի տարբերություններ են դրսևորվում միայն միջավայրի կառավարում ($p=0.005$) և հոգեբանական բարեկեցություն ($p=0.035$) սանդղակներում:

Վիճակագրական վերլուծության *Շեֆեի չափանիշի* համաձայն՝ ինչպես միջավայրի կառավարում, այնպես էլ հոգեբանական բարեկեցություն սանդղակների դրսևորման տարբերությունները նշանակալի են միայն ապահով և տազնապային-խուսափող կապվածության տեսակների միջև: Տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Բազմակի համեմատական վերլուծությունը՝
ըստ Շեֆեի չափանիշի**

	(I) Կապվածություն մոր հետ	(J) Կապվածություն մոր հետ	Միջին. Տարբերություն (I-J)	Նշանակալիություն
Միջավայրի կառավարում	Ապահով	Մերժող	4.852	.354
		Մտահոգ	4.323	.781
		Տազնապային-խուսափող	11.798*	.010
	Մերժող	Ապահով	-4.852	.354
		Մտահոգ	-.529	1.000
		Տազնապային-խուսափող	6.946	.379
	Մտահոգ	Ապահով	-4.323	.781
		Մերժող	.529	1.000
		Տազնապային-խուսափող	7.475	.538
	Տազնապային-խուսափող	Ապահով	-11.798*	.010
		Մերժող	-6.946	.379
		Մտահոգ	-7.475	.538
Հոգեբանական բարեկեցություն	Ապահով	Մերժող	12.835	.784
		Մտահոգ	7.492	.985
		Տազնապային-խուսափող	46.317*	.039
	Մերժող	Ապահով	-12.835	.784
		Մտահոգ	-5.343	.996
		Տազնապային-խուսափող	33.482	.346
	Մտահոգ	Ապահով	-7.492	.985
		Մերժող	5.343	.996
		Տազնապային-խուսափող	38.825	.439
	Տազնապային-խուսափող	Ապահով	-46.317*	.039
		Մերժող	-33.482	.346
		Մտահոգ	-38.825	.439

* միջինների տարբերությունը նշանակալի է $p < 0.05$ մակարդակում

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից՝ դրսևորման մակարդակների վիճակագրորեն նշանակալի տարբերություն է դիտարկվում միջավայրի կառավարում և հոգեբանական բարեկեցություն սանդղակներում՝ ըստ կապվածության ապահով և տազնապային խուսափող տեսակների: Այսինքն՝ այն դեպքում, երբ կապվածության տեսակն ապահով է, դրսևորվում է հոգեբանական բարեկեցության և միջավայրի կառավարման բարձր մակարդակ,

մինչդեռ եթե առկա է կապվածության տազնապային-խուսափող տեսակը, հոգեբանական բարեկեցության և միջավայրի կառավարման մակարդակը ցածր է: Հարկ է նշել, որ մերժող և մտահոգ կապվածության տեսակների դեպքում հոգեբանական բարեկեցության և միջավայրի կառավարման միջիններում նշանակալի տարբերություններ չկան:

Կարող ենք ասել, որ կապվածության երկու ծայրահեղ բևեռներն են ունենում որոշակի ազդեցություն հոգեբանական բարեկեցության վրա, քանի որ ապահով կապվածության դեպքում հարաբերություններում տազնապի և խուսափման մակարդակները ցածր են, մինչդեռ տազնապային-խուսափող տեսակի դեպքում բարձր են ինչպես տազնապի, այնպես էլ խուսափման ցուցանիշները: Մերժող և մտահոգ տեսակների դեպքում բարձր է կամ միայն խուսափման, կամ միայն տազնապի ցուցանիշը, ինչը կարող է պատճառ հանդիսանալ, որ հոգեբանական բարեկեցության սանդղակների դրսևորման վրա դրանք նշանակալի ազդեցություն չունեն:

Հոր հետ հարաբերություններում կապվածության տեսակի և հոգեբանական բարեկեցության փոխկապվածությունը ANOVA վերլուծությամբ դուրս բերելու համար ևս նախ կիրառել ենք հոմոգենության թեստը՝ ըստ *Լևինի չափանիշի*, որի արդյունքներից հասկացել ենք, որ ANOVA վերլուծությունը կիրառելի է բոլոր սանդղակների համար: ANOVA վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հոր հետ կապվածության տեսակի և հոգեբանական բարեկեցության սանդղակների միջև փոխկապվածություն է նկատվում միայն միջավայրի կառավարում սանդղակի շրջանակներում ($p=0.039$): Սակայն, Շեֆեի չափանիշը կապվածության տեսակով պայմանավորված հոգեբանական բարեկեցության հստակ տարբերություններ դուրս չի բերել: Մեր կողմից հավելյալ կիրառվել են նաև *Դունկանի և Բոնֆերոնիի չափանիշները*, սակայն այս մեթոդները ևս վիճակագրորեն նշանակալի տարբերություններ ցույց չեն տվել:

Վերոնշյալ վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հոր հետ կապվածության տեսակը ևս փոխկապված է հոգեբանական բարեկեցության միջավայրի կառավարում սանդղակի հետ, սակայն բազմակի համեմատությամբ դուրս չի բերվել, թե մասնավորապես կապվածության որ տեսակի դեպքում ինչպիսի վիճակագրական տարբերություններ կան: Դա կարող է պայմանավորված լինել նրանով, որ թեև հոր հետ կապվածությունը ևս ունենում է իր ազդեցությունը, այնուամենայնիվ, այն իր ուժգնությամբ զիջում է մոր հետ կապվածությանը:

Ռոմանտիկ զուգընկերոջ և լավագույն ընկերոջ հետ կապվածության տեսակի և հոգեբանական բարեկեցության սանդղակների միջև համահարաբերակցությունը ևս ստուգվել է ANOVA վերլուծությամբ:

Այս դեպքերում ևս հոմոգենության թեստն է կիրառվել՝ ըստ Լևինի չափանիշի: Երկու դեպքում էլ արդյունքները ցույց են տալիս, որ ANOVA վերլուծությունը կիրառելի է:

Ռոմանտիկ զուգընկերոջ և լավագույն ընկերոջ հետ կապվածության տեսակի և հոգեբանական բարեկեցության փոխկապվածության ANOVA վերլուծության արդյունքները վկայում են այն մասին, որ ըստ կապվածության տեսակի հոգեբանական բարեկեցության սանդղակների դրսևորման տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չեն ինչպես ռոմանտիկ զուգընկերոջ, այնպես էլ լավագույն ընկերոջ հետ հարաբերություններում: Համանման արդյունքներ են ստացվել նաև գլոբալ կապվածության և հոգեբանական բարեկեցության փոխկապվածության վերլուծությունից:

Այս արդյունքները վկայում են այն մասին, որ ռոմանտիկ զուգընկերոջ հետ, լավագույն ընկերոջ հետ և գլոբալ կապվածության տեսակները չունեն նշանակալի ազդեցություն հոգեբանական բարեկեցության դրսևորման մակարդակների վրա: Այսինքն՝ մարդու համար առավել նշանակալի են իր ծնողների հետ հարաբերությունների տեսակը, առավել ևս՝ մոր հետ հարաբերությունները: Այս ցուցանիշները ևս մեկ անգամ ապացուցում են Ջ. Բուուլբիի տեսությունը: Ինչպես Ջ. Բուուլբին էր մատնանշում մոր հետ ապահով կապվածության կարևորությունը երեխայի զարգացման և հոգեբանական ներդաշնակության համար, այնպես էլ մենք տեսնում ենք, որ նույնիսկ մեծահասակների հոգեբանական բարեկեցության համար շարունակում է կարևոր լինել հենց մոր հետ կապվածությունը: Կապվածության տեսակը, հատկապես մոր հետ կապվածության տեսակը շարունակում է որոշիչ դեր խաղալ մարդու ողջ կյանքի ընթացքում:

Ամփոփում

Մեր իրականացրած հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

- Մոր հետ ապահով կապվածության դեպքում երիտասարդը կարող է հաջողությամբ դրսևորել գործունեության տարբեր տեսակների յուրացում, ցանկալիին հասնելու, սեփական նպատակների իրականացման ճանապարհին դժվարությունները հաղթահարելու բարձր ընդունակություն, սեփական ժամանակը կառավարելու կարողություն և ձգտում:
- Հոր հետ ապահով կապվածության դեպքում մարդը դրսևորում է շրջապատը կառավարելու բարձր իշխանություն և կոմպետենցիա,

կառավարում է արտաքին գործունեությունը, արդյունավետ կերպով օգտագործում է ընձեռված հնարավորությունները, կարողանում է ստեղծել և կառավարել իրավիճակներ՝ իր նպատակներին հասնելու համար:

- Ռոմանտիկ զուգընկերոջ, լավագույն ընկերոջ հետ և գլոբալ կապվածության տեսակներն էականորեն չեն ազդում հոգեբանական բարեկեցության վրա:

Այսպիսով՝ մենք հասկանում ենք, որ վաղ մանկության տարիներին ձևավորվող կապվածությունը ծնողների, հատկապես մոր հետ շարունակում է մեծ դեր խաղալ մարդու կյանքում նաև երիտասարդության շրջանում: Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ ծնողների հետ ապահով կապվածության պայմաններում մարդու ընդհանուր հոգեբանական բարեկեցությունն ունենում է բարձր մակարդակ, մարդն իրեն զգում է ավելի ներդաշնակ, ինքն իրեն և սեփական կյանքին տալիս է դրական գնահատական, բավարարված է սեփական կյանքով: Ինչպես նաև ծնողների հետ ապահով կապվածության և սեփական կյանքը տնօրինելու կարողության միջև ևս կա փոխկապվածություն. ծնողների հետ ապահով կապվածություն ունենալու պայմաններում մարդը դրսևորում է շրջապատող միջավայրը կառավարելու իշխանություն և կոմպետենցիա, արդյունավետ կերպով օգտագործում է իրեն ընձեռված հնարավորությունները, իր նպատակներին հասնելու համար կարողանում է ստեղծել և կառավարել իրավիճակներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Боулби, Дж.** *Привязанность*, М., Гардарики, 2003.
2. **Крейн, У.** *Теории развития. Секреты формирования личности*, СПб.: ПРАЙМ-ЕВРОЗНАК, 2002.
3. **Оутс, Дж.** *Отношения привязанности, В фокусе внимания—раннее детство.* Հասանելի է http://bernardvanleer.org/files/ECiF1_Russian.pdf
4. **Первин, Л., Джон, О.** *Психология личности: Теория и исследования*, М., Аспект Пресс, 2001.
5. **Пилягина, Г., Дубровская, Е.** Нарушения привязанности как основа формирования психопатологических расстройств в детском и подростковом возрасте, *Мистецтво лікування*. N 6, 2007, с. 71–79.
6. **Шевеленкова, Т., Фесенко, П.** Психологическое благополучие личности (обзор основных концепций и методика исследования), *Психологическая диагностика*, N 3, 2005, с. 95–129.

7. **Brumbaugh, C., & Fraley, R.** Transference and attachment: How do attachment patterns get carried forward from one relationship to the next? *Personality and Social Psychology Bulletin*, N 32, 2006, pp. 552-560.
8. **Fraley, R.** *Relationship Structures (ECR-RS) Questionnaire*. Հասանելի է <http://internal.psychology.illinois.edu/~rcfraley/asures/relstructures.htm>
9. **Fraley, R.** *A brief overview of adult attachment theory and research*. Հասանելի է <http://internal.psychology.illinois.edu/~rcfraley/attachment.htm>
10. **Fraley, R., Heffernan, M., Vicary, A., Brumbaugh, C.** The Experiences in Close Relationships-Relationship Structures questionnaire: A method for assessing attachment orientations across relationships, *Psychological Assessment*, N 23, 2011, pp. 615-625.
11. **Fraley, R., Vicary, A., Brumbaugh, C., Roisman, G.** Patterns of stability in adult attachment: An empirical test of two models of continuity and change, *Journal of Personality and Social Psychology*, N101, 2011, pp. 974-992.
12. **Meredith, P., Ownsworth, T., Strong, J.** A review of the evidence linking adult attachment theory and chronic pain: Presenting a conceptual model, *Clinical Psychology Review*, N 28, 2008, pp. 407-429.